ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.10.2022թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում:

Գնահատող հանձնաճողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝	Ալֆրեդ Քոչարյան
Հանձնաժողովի անդամներ՝	Աստղիկ Մարաբյան, Գառնիկ Մոմջյան, Գոհար Սահյան, Զարուհի Հայրապետյան, Անի Պապիկյան, Դավիթ Պողոսյան, Արմեն Հովհաննիսյան, Անահիտ Միքայելյան, Գուրգեն Գասպարյան, Անուշ Բաբայան, Մարինա Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակիցներին գնման առարկայի հատկանիշների՝ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերի վերաբերյալ առաջարկների ներկայացման հրավերի (այսուհետ՝ առաջին փուլի հրավեր) տրամադրման մասին.

1.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 81-րդ կետը, գնման ընթացակարգի «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված բոլոր մասնակիցներին 05.10.2022թ տրամադրվել է առաջին փուլի հրավեր, որով առաջին փուլի հայտերի ներկայացման ժամկետ է սահմանվել 2022 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ:

2. Տեղեկատվություն առաջին փուլի հայտեր ներկայացրած նախաորակավորված մասնակիցների և հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Կարգի 82-րդ և 83-րդ կետերով և առաջին փուլի հրավերով սահմանված կարգով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպված «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի առաջին փուլի հայտ են ներկայացրել՝ Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյանը, «ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ-ն, «ԴԸ ՕՆԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «Դիջիֆենս» ՍՊԸ-ն, «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «Ինֆոտեխ» ՍՊԸ կոնսորցիումը, «Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիումը և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն:

2.2 Նախաորակավորված մասնակիցների կողմից ներկայացված առաջին փուլի հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

3. Նախաորակավորված մասնակիցների կողմից ներկայացված առաջին փուլի հայտերը պատասխանատու ստորաբաժանմանը տրամադրման, գնահատող հանձնաժողովի նիստի կասեցման, և նախաորակավորված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունների հրավիրման մասին.

3.1 Հիմք ընդունելով Կարգի 84-րդ կետի 1-ին ենթակետը՝ սույն արձանագրության 2.1 կետում նշված հայտերը տրամադրել պատասխանատու ստորաբաժանմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

3.2 Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և Կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, մինչև 2022 թվականի նոյեմբերի 4-ը ներառյալ, նախաորակավորված բոլոր մասնակիցներին ուղարկել ծանուցում և հրավիրել միաժամանակյա բանակցությունների՝ 2022 թվականի նոյեմբերի 9-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 9-րդ հարկի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 2022 թվականի նոյեմբերի 9-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 9-րդ հարկի դահլիճում:

Մասնակցում էին՝ Նախաորակավորված մասնակիցներ և հրավիրված խորհրդատուներ ՝ Ցանկը կցվում է:

4. Նախաորակավորված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.

4.1 Հնարավորություն տալ նիստին ներկա նախավորակավորված մասնակիցներին ներկայացնելու իրենց առաջարկները (առաջին փուլի հայտեր) սույն արձանագրության 2.1 կետում նշված հերթականությամբ, որից հետո նախաորակավորված բոլոր մասնակիցների հետ կազմակերպել բանակցություններ՝ մասնակիցների կողմից ներկայացված առաջարկների գնման առարկայի հատկանիշների՝ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերի շուրջ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

4.2 Սահմանել, որ միաժամանակյա բանակցությունների նիստի ձայնագրությունը կազմում է սույն արձանագրության անբաժանելի մասը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի կասեցման մասին.

5.1 Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի հաստատման նպատակով այն շարունակել պատասխանատու ստորաբաժանման կողմից Կարգի 85-րդ կետով սահմանված կարգով գնահատող հանձնաժողովի քարտուղարին գնման վերանայված հայտը տրամադրելուց հետո՝ ոչ ուշ, քան ստանալու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 12, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 2023 թվականի մարտի 16-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում:

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Անի Պապիկյանը

6. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի հաստատման մասին.

6.1 Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից **2023 թվականի մարտի 15-ին** ներկայացված գնման վերանայված հայտը՝ հաստատել «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերը /կցվում է/ և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 86-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով՝ կից գրությամբ, էլեկտրոնային եղանակով, միաժամանակ ուղարկել նախաորակավորված բոլոր մասնակիցներին և առաջարկել ներկայացնել երկրորդ փուլի հայտ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

6.2 Երկրորդ փուլի հայտեր ներկայացնելու ժամկետ սահմանել՝ նախաորակավորված մասնակիցներին երկրորդ փուլի հրավերի տրամադրման օրվանից հաշված 60-րդ օրացուցային օրը, ժամը 15:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

6.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա երկրորդ փուլի հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետը լրանալու օրը, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 11, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Նախագահ՝ _____ Ալֆրեդ Քոչարյան

Անդամներ՝ _____ Աստղիկ Մարաբյան

_____ Գառնիկ Մոմջյան

_____ Գոհար Սահյան

_____ Զարուհի Հայրապետյան

_____ Անուշ Բաբայան

_____ Մարինա Հակոբյան

_____ Դավիթ Պողոսյան

_____ Արմեն Հովհաննիսյան

_____ Անահիտ Միքայելյան

_____ Գուրգեն Գասպարյան

Քարտուղար՝ _____ Արսեն Սողոմոնյան